ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇԻՒ

Ուսումնական մասի Շրվենանց գիւղի Հ. Եկ. Ծխ. երկդասեան երկսեռ «Գ. Յ. Տէր-Մարգարեան» դպրոցի 19$^{14}/_{15}$ ամի։

Իւրաքանչիւր ազգի յարատևութիւնն ու բարգաւաճումը կախուած է նրա կրթութեան աստիճանից և իդէալական, բարոյական ձգտումներից։

Հայ ազգը ի բնէ ուսումնասէր՝ և յառաջադէմ գաղափարների ընդօրինակող լինելով՝ առաջ է ընթացել ժամանակի հետ, թողել է իրեն հասակակից շատ ազգերի —բաբելացիներին, ասորիներին, պարթևներին և այլն— ապրել է և շարունակում է ապրել իբրև կուլտուրական մի ցեղ, որ և այսօր քաղաքակիրթ ազգերի ուշադրութեան և կարեկցութեան առարկան է դարձած։

Դպրոցը ազգի գոյութեան պատւանդանն է։

Մեր հայրենիքի նկատմամբ այդ կարևոր փակտորի նշանակութիւնն ամենից վաղ զգացել և ըմբռնել է մեր հայրենակից պ. Գասպար Տէր-Մարգարեանը, որ իւր ծննդավայր Շրվենանց գիւղում կառուցանելով այս լուսոյ տաճարը և նւիրելով Նորաշէնու հասարակութեան, 13 ձիգ տարիների ընթացքում իւր ուսերի վրայ առած բոլոր ծախքերը, լոյս է սփռել մեր մատաղ սերնդի մէջ։

Պ. Գասպար Տէր-Մարգարեանը 1903 թւին հիմնելով այս դպրոցը իրօք հանդիսանում է Ղափանի մտաւոր վերածնութեան նախակարապետը։

Շրվենանցի դպրոցն այսօր բոլորում է իւր գոյութեան 13 ամեակը։

Ասել է թէ նա 13 տարի անընդհատ լուսաւորել է իւր շուրջը, հետզհետէ վանելով այն թանձր խաւարը, որով պատած էր մեր հայրենիք՝ չքնաղ Ղափանը, որի մէջ խարխափում էին մեր հայրենակիցները։

Ներկայ ուսումնական տարին՝ դպրոցի նորոգութեան պատճառով սկսել է սովորականից ուշ՝ սեպտեմբերի 15-ին և վերջացել է մայիսի 24-ին։

Աշակերտաց թիւը։ Տարւայ սկզբին եղել են 132 աշակերտ, 29 աշակերտուհի, ընդամենն 161 հոգի։ Հետզհետէ պակասելով՝ տարեվերջին մնացել են 105 տղայ, 26 աղջիկ, ընդամենն 131 հոգի։

Ուսումնական տարում պարապմունք եղել է 167 օր—811 ժամ։

Մանկավարժական ժողովներ. Տարւայ ընթացքում մանկավարժական ժողովներ գումարուել են 20 անգամ, որոնց նիւթն էր աշակերտների ընդունելութեան և յառաջադիմութեան ու վարքի վերաբերեալ խնդիրներ։ Մանկավարժական խորհուրդը մի շարք միջոցներ է ձեռնարկել՝ վերջ տալ աշակերտաց անկարգութեանն ու վատ սովորութիւններին, որոնք, անշուշտ, հետևանք են ընտանիքում տիրող կարգ ու կանոնի—այն է յիշոցներ, մարմնի ու հագուստի անմաքրութիւն, դասերից յաճախ բացակայելը և այլն և այլն։ Այս չարիքներին վերջ տալու նպատակով ուսուցչական խումբը աշնանն այցելել է Նորաշէն, Ծլաթաղ և Վ. Ծոտանեան գիւղերը, ուր ծնողական ժողովներ գումարելով խօսել և բացատրել է ծնողների և խնամակալների պարտականութեանց մասին։ Նախորդ տարիների ցուցակներն աչքի անցնելով՝ կարծես որոշ ազդեցութիւն ունեցել են ձեռնարկած միջոցները, սակայն վարչութիւնս գոհ մնալ չի կարող եղած դրութեամբ, որովհետև մեր անպարտաճանաչ ծնողները դեռ ևս շարունակում են շահագործել իրենց զաւակներին, յետ քաշելով դպրոցից՝ տնային և դաշտային աշխատանքներին ծառայցնելու նպատակով։

Ասածներիս պերճախօս վկայ են հետևեալ թւերը, որ քաղուած են դասատուների ուշի-ուշով կազմած ցուցակներից։ Դպրոցի 131 աշակերտներից կանոնաւոր յաճախել են միայն 14 հոգի, իսկ մնացեալ 117 հոգին բացակայել են 8179 ժամ։ Հարկ չկայ բացատրելու, թէ

ինչ վատ ազդեցութիւն կունենայ այդ դրութիւնը դպրոցի յառաջադիմութեան վրայ։ Աւելացրէք և այն, որ Դ. և Ե. բաժանմունքները միացեալ են, իսկ միացեալ բաժանմունքների բացառական կողմը՝ արդիւնքի տեսակէտից ակներև է, պատկերը պարզ կլինի։ Սիրում ենք հաւատալ, որ բարեպատեհ ժամանակ, երբ Ե. բաժանման աշակերտների թիւն էլ կաւելանայ, մեծարգոյ բարերարը կզատէ և հինգերորդը։

Հանդէսներ. Սեպտեմբերի 14-ին ուսուցչական և հոգաբարձական կազմերի, աշակերտ-աշակերտուհիների և շրջակայ գիւղերից ժողոված ծնողների ներկայութեամբ ս. պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարւեց դպրոցի բարերարի ծնողաց շիրիմների վրայ, որից յետոյ դպրոցի դահլիճում խօսք եղաւ ուսման նշանակութեան և ծնողաց պարտականութեանց մասին։ Նոյեմբերի 16-ին և յունուարի 29 կազմեցին գրական-երաժշտական ցերեկոյթներ ներկայութեամբ բոլոր աշակերտների և ծնողների, ուր սան ու սանուհիներ արտասանում էին ոտանաւորներ, իսկ երգեցիկ խումբը երգում էր սօլօ և խմբական երգեր։

Մայիսի 9-ին և 11-ին դպրոցի դահլիճում, նահանգապետի թոյլտուութեամբ, կայացաւ ներկայացում և գրական-երաժշտական երեկոյթ յօգուտ հայ փախստականների։ Առաջինում ներկայ էին միայն ծնողները և շրջակայ գիւղերից հիւրեր, որոնք նուիրեցին 9 ռուբ. 35 կոպ., իսկ երկրորդին՝ հանքերից և շրջակայ գիւղերից յատուկ հրաւիրուած մարդիկ, որոնք նուիրեցին 240 ռուբլի։ Ծախքը դուրս գալով՝ զուտ արդիւնքը 123 ր. 14 կոպ. ուղարկւեց Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Կոմիտէին՝ գործադրելու իր նպատակին։

Տաճկահայ եղբայրներին օգնութեան հանելու կոչերը մեզ ևս հասան։ 1) Դպրոցիս աշակերտութիւնը այդ նպատակով հանգանակեց 10 ռուբ. 50. կոպ. և ուղարկեց «Հորիզոնի» խմբագրութեան ըստ պատկանելոյն հասցնելու։ 2) Ուսուցիչներն արձագանք տալով Երևանի Փոխթեմակալ տ. Խորէն եպիսկոպոսի կոչին սիրայօժար կեր-

պով Նախիջևանի իրենց ռոճիկի 2⁰/₀-ը 45 ռուբ. 80 կոպ., որն երկու Նաղդասի ուղարկուեց Երևան Նորին Արքեպիսկոպոսին ուսուցիչների անունից վիրաւոր զինուորների համար մանձնակոչ պոնելու։

Երգեցիկ խումբ։ Դպրոցս երգեցիկ խումբը, որ բաղկացած էր 25 տան ու տնուհիներից պ. Ս. Ղազարեանի ղեկավարութեամբ երկձայն երգերով շուք էր տալիս հանդէսներին, իսկ պատարագի արարողութիւնը միաձայն երգերով Երմենանցի, Նորաշէնի և վ. Ռոտանեանի ենկեցիներում, գրաւել է ժողովրդի հոգ բաղմութիւն, պատճառելով նրանց հոգեկան հաճոյք։

Դասագրքերի և գաղափար պիտոյքների փաճառումից դուրսցած արդիւնքը՝ պ. Հայր. Ղազարեանի միջոցով՝ տացուած է 64 ր. 50 կ., իսկ այդ գումարով գնուած են ցուցակներ, մատեաններ, անդրբրատներ, տեղեկագրքեր, էկոյագրքեր և կանոններ աշակերտաց համար։ Միով բանիւ այդ գումարով հոգացուած է ընթացիկ ուսումնական տարուայ դասախօսի մէջ մտած «գրականական ծախք» էկէտը։

Գրադարան։ Դպրոցը իւր անուանը փայլ գրադարան չունի։ Կանոնաւոր գործադրութիւն չունենալով ամենամամ անցեալի մասին որ և է գաղափար կազմելը դժուար է, սակայն դպրոցին մօտիկ իրագեկ մարդիկ պնդում են՝ թէ գրադարանն ունեցել է արժէքաւոր մանկավարժական և մանկական գրքեր՝ հայ և ռուս լեզուներով, որոնք անհոգ վերաբերմունքի շնորհիւ հետզհետէ անհետացել են։ Դէպ՝ 13 ամեայ դպրոցի գործերից երևում է, որ միայն անցեալ 1913—14 ուս. տարուան վերջումն է կազմած դպրոցական գրքերի և ինվենտարի ցուցակը և այն էլ առանց յանձնարական ու ստորագրական գործողութեան, առանց տարեգրութիւններու։ Ապագայ Վարչութեանն է մնում լրացնել այդ խոշոր պակասը, տալ դպրոցին համապատասխան մի գրադարան, որից օգուտ կարողանայն և ուսուցիչները և աշակերտները։

Աղքատախնամ ընկերութիւն։ դպրոցս աշակերտու-

թեան 60%-ը ծայրայեղ չքաւոր ծնողների զաւակներ են, որոնք շատ դժուարութեամբ են ձեռք բերում դասական դիրքերը, իսկ հարուստ անեան ստակ նրանք ծածկում են իրենց մերկութիւնը ցնցոտիներով։ Այս չարիքի առաջն առնելու և անհրաժեշտ եղեւոյց. թշուառութիւնը մասամբ ամաքելու նպատակով գպրոցի ուսուցչական և հոգաբարձական խառն ժողովը անցեալ դեկտեմբերի 8-ին որոշում է կայացնում՝ իշխանակ վարդապետ ու. Մնա Տէր Մինասեանի հիմնել մի վարչական մարմին,— «Երիտասարդի գպրոցի չքաւոր աշակերտներին նպաստող ազգասիրական յանձնաժողով» անունով, որի նպատակն է լինելու միջոցներ հայթայթել շատով մատակարարել յառաջադէմ սան ու սանուհիներին գրական պիտոյք, հագուստ և թոշակներ։ Ընդհանրապէս միջոցները հայթայթելու են կամաւոր նէրներից, եղեկոյթներից և նեղկայացուցիչներից։

Ապատարանի խնդիր. գպրոցիս աշակերտութիւնը յաճախում է հետեւեալ դիւղերից.

			քրոս	տաճկ
1. Երիտասարդ՝ որ հեռու է գպրոցից			»	100
2. Վերին Խոտանան՝	»	»	4	»
3. Ներքին Խոտանան՝	»	»	2	250
4. Խրամբոլ՝	»	»	4	25
5. Սառչաձոր՝	»	»	4	»
6. Նորաշէն՝	»	»	3	»

Կան նաև ուրիշ շրջաններից՝ Դ և Ե բաժանմունքները մտած աշակերտներ, որոնք ապրում են վերոյիշեալ գիւղերում։ Բայց իւ մեր գպրոցը՝ այս պայմանների մէջ իրրև կենդրոնական՝ պէտք է ունենայ ապատան գիշերօթիկներ պահելու համար։ Երթևեկ աշակերտներից շատերը, մանաւանդ ուերի հեռաւորները կարող կը լինեն ամսական 8 բուբ վճարել և սոսնայ առաւօտ երեկոյ թէյ, նախաճաշ, ճաշ և ընթրիք։ Ապատարանի համար շատ յարմար է գրպրոցի սորին յարկում գտնւող դահլիճը, որ խոնաւութիւնից բոլորովին ազատ 13 արշին երկարութիւն, 8½ արշին լայնութիւն և 5 արշին բարձրութիւն ունի՝ առատ լուսով

Դպրոցի այդ մասը, որ ծառայում է իբրև մթերանոց, կարելի է կարգի բերել և յատկացնել ապաստարանի, ուր կտեղաւորուեն 30-ի չափ աշակերտներ։

1914 թւին ընդունուած դպրոցի շէնքը մատնուած էր խիստ անուշադրութեան՝—սուաղները թափուած, դռները խարխուլ՝ առանց փականների, առանց բակի ու ցանկապատի, մի խօսքով այծերի և անասունների հանգստատեղի էր։ Մեծարգոյ բարերարն ու հոգաբարձուք ընդառաջ գալով իմ խնդրին՝ հիմնական նորոգութեան ենթարկեցին, որ վերջացաւ սեպտեմբերի 12-ին։

Դպրոցը 1914—15 ուս. տարւայ մէջ մուտք է ունեցել թոշակագրամ աշակերտներից 412—50 կոպ., պ. Գասպար Տէր Մարգարեանից նպաստ 2300 ռ. ռոճիկ ուսուցչաց։ Իսկ 401—24 կ. էլ դպրոցի նորոգութեան, ծախք եղել է 3551 ռ. 57։

Աւագ ուսուցիչ՝
Գ. Տէր Մինասեան.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Մեղրու վեցամեայ Ծխական Դպրոցի $19^{14}/_{15}$ ուս. տարւայ.

Մեղրու դպրոցն այս տարի բոլորեց իր 35 ամեակը, մի ժամանակամիջոց, որը պատուաբեր է ծխական դպրոցի համար։ Այդ ամբողջ ժամանակամիջոցում հետզհետէ յառաջադիմել է և չէ մնացել հնութեան գրկում։ Հասարակութիւնը և վարչութիւնը իրենց ուժերի ներածին չափ ամեն կերպ նպաստել են բարձրացնել դպրոցի անտեսական և թէ՝ յառաջադիմութեան ընդհանուր մակարդակը։

Դեռ անցեալ ուսումնական տարւայ վերջում միտք էր առաջացել տօնել դպրոցի յոբելեանը, սակայն ներկայիս աղէտներով լի ժամանակներում այդ միտքն իրականացնելն անհնարին եղաւ։ Չնայած այն հանգամանքին, որ ներկայ ժամանակի տարած դրութեան շնորհիւ շատ տեղերում դպրոցները փակեցին, կրճատուեցին նրանց նախահաշիւ-